# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԼՂԻՄ-ՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941-1945 ԹԹ.)

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Կ. Ա.

*Պատերազմի առաջին ամիսներին գերմանաֆաշիստական զորքերին հաջողվեց սրընթաց հարձակումով գրավել Ուկրաինան, Բելոռուսիան, Մոլդովան, Մերձբալթյան խորհրդային հանրապետությունները և Ռուսաստանի արևմտյան, կենտրոնական, հարավային շրջանների զգալի մասը, որոնք պատերազմի նախօրյակին տալիս էին երկրի հացահատիկի համախառն արտադրանքի 38 և շաքարի արտադրության 84%-ը: Այդ տարածքներում էր գտնվում երկրի խոշոր եղջերավոր անասունների 38 և խոզերի գլխաքանակի 60%-ը[1]: Ուստի թշնամու կողմից չգավթված հանրապետությունների առջև առաջնահերթ խնդիր դրվեց գյուղատնտեսական աշխատանքները վերակառուցել պատերազմի պահանջներին համապատասխան, որպեսզի լրացվի պետությանն անհրաժեշտ հացի, մսի, յուղի, մնացած անհրաժեշտ սննդամթերքի պաշարը: Ելնելով խորհրդային իշխանության որոշումներից՝ ԼՂԻՄ-ի մարզային մարմինները նույնպես ձեռնամուխ եղան պետության համար այդ կարևորագույն խնդրի իրականացմանը:*

*Հարկ է նշել, որ պատերազմի հենց առաջին օրերին ԼՂԻՄ-ում կատարված համատարած զորահավաքի հետևանքով Կարմիր բանակի շարքերն էին զորակոչվել ավելի քան 45.000 արցախահայ, որոնցից 30.000-ը գյուղի աշխատավորներ էին: Ուստի վտանգվում էին խոտհարքի ու հնձի աշխատանքները: Մարզի կուսակցական և պետական իշխանությունները ամենից առաջ ձեռնարկեցին գյուղատնտեսական բնագավառի կադրերի պակասը լրացնելու գործընթացին: Ռազմաճակատ զորակոչված ամուսիններին, որդիներին ու հայրերին կարճ ժամանակամիջոցում փոխարինեցին կանայք, պատանիներն ու մեծահասակները:*

*1941 թ. հունիսի 25-ին ԼՂԻՄ-ի մարզկոմը որոշում ընդունեց Մարտակերտի, Ստեփանակերտի ու Մարտունու մեքենատրակտորային կայաններում բացել տրակտորիստների պատրաստման դասընթացներ, որոնք բավականաչափ*

---

[1] *Âåëèêàÿ Отечественная война Советского Союза 1941-1945. Краткая история, М., 1970, с. 106.*

*նպաստեցին 1941 թ. հացահատիկի բերքահավաքի ժամանակ գյուղտեխնիկայի կիրառության գործին: Հնձի օրերին շատ կանայք, որ մինչ այդ իրենց ձեռքը երբեք մանգաղ չէին վերցրել, ցորենի ու գարու արտերում մեծահասակների հետ աշխատում էին օրնիբուն: Այսպես, օրինակ, Մարտունու շրջանի Գիշի գյուղի կոլտնտեսությունում պատերազմի առաջին օրերին 35 կին մանգաղը ձեռքներին դուրս եկան հնձի: Նրանք շուտով տիրապետեցին իրենց գործին և օրվա պլանները սկսեցին կատարել 130-140%-ով: Ջանասիրաբար էին աշխատում նաև Ստեփանակերտի շրջանի Հարավ գյուղի կանայք (թվով՝ 60): Իրենց մայրերին ընդօրինակեցին գյուղի ոչ լրիվ միջնակարգ դպրոցի աշակերտները (40 հոգի)՝ ընդգրկվելով հասկահավաքի մեջ: Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղի արտերում, հունիսի 23-ից սկսած, ամեն օր բերքահավաքի աշխատանքներին մասնակցում էին 210 կոլտնտեսուհի և կոլտնտեսական, 150 պիոներ[2]: Բերքահավաքի մեջ ներգրավված կանանց աշխատանքի մասին Մարտունու շրջանի Ղզղալա գյուղի կոլտնտեսության նախագահ Ի. Հարությունյանը նշում է. «Մեր կոլտնտեսուհիները տղամարդկանց հետ պայքարում են բերքահավաքն անկորուստ հավաքելու համար: Այսօր նրանք պատրաստ են կրկնապատկելու իրենց ուժն ու եռանդը հայրենիքին էլ ավելի հաց ու միս հանձնելու համար, մեր գործող բանակի շարքերը անցնող տղամարդկանց փոխարինելու համար»[3]: Բերքը կազմակերպված և անկորուստ հավաքելը պատերազմի առաջին ամիսներին առաջնահերթ խնդիր էր, որի համար մարզային և շրջանային կուսակցական ու պետական մարմինները ջանք չէին խնայում: Այդ մասին "Правда", թերթն իր առաջնորդող հոդվածում գրում է. «Պատերազմի ժամանակ պահանջվում է բացառիկ խնայողություն: Թանկ է աճեցված ու հավաքված հացահատիկի յուրաքանչյուր գրամը: Որքան ավելի շատ լինեն հացահատիկն ու այլ մթերքները, այնքան ավելի շատ պարենային ռեսուրսներ ու ռեզերվներ կունենա խորհրդային երկիրը: Հիշելով այդ՝ կոլտնտեսականները խնամքով հավաքում են բերքը՝ ջանալով դաշտում չթողնել չհնձված ոչ մի հասկ, գետնին ընկած ոչ մի հատիկ: Բերքահավաքի ժամանակ կորուստներ թույլ տալը, մանավանդ այժմ, պատերազմի օրերին, հանցագործություն է»[4]:*

*ԼՂԻՄ-ի կուսակցական կազմակերպության XI գումարման 5-րդ պլենումում (26.XI.1941) արձանագրված է. «Մարզում կատարվել է 60709 հեկտար աշնանացան, որը 11709 հեկտարով ավել է նախորդ տարվանից...*

---

[2] *Սովետական Ղարաբաղ, 28.VI, 5.VII.1941:*

[3] *Նույն տեղում, 25.VI.1941:*

[4] *Правда, 7.VIII.1941:*

*Կոլտնտեսությունները ժամանակին կատարել են դրամական միջոցների մոբիլիզացման, հացամթերման, մսի, կաթի, անասնակերի, բրդի, կաշվի հանձնման պլանները: Ժամանակից շուտ գերակատարվել են սպիրտի, խաղողի, շերամի կոկոնի մթերման, ճանապարհաշինարարական աշխատանքների պլանները: Չնայած համընդհանուր զորահավաքի հետևանքով ռազմաճակատ էր մեկնել գյուղի աշխատունակ բնակչության զգալի մասը, բերքահավաքի և աշնանացանի ժամանակ աշխատանքի դուրս եկան ավելի շատ մարդիկ՝ շնորհիվ կանանց, մեծահասակների ու պատանիների: Այսպես, օրինակ, եթե 1940 թ. հունիսի 10-20-ը միջին հաշվով Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի Էնգելսի անվան կոլտնտեսության դաշտերում աշխատել են 311 մարդ, ապա 1941 թ. հուլիսի 1-10-ը ամեն օր դաշտ է դուրս գալիս 459 մարդ»[5]:*

*Այդ օրերի մասին տնտ. գիտ. դոկտոր Հրանտ Պողոսյանը, որն այն ժամանակ սովորում էր Մարտունու շրջանի Նորշեն գյուղի դպրոցում, հիշում է. «Խորհրդային Միության վրա ֆաշիստական Գերմանիայի հարձակման մասին ռադիոյով Լևիտանի հաղորդման հաջորդ օրը գյուղում 16-65 տարեկան ոչ մի տղամարդ չմնաց, քանի որ համընդհանուր զորահավաքի հետևանքով նրանց բոլորին զորակոչեցին Կարմիր բանակ: Դաժան պայմաններ էին ոչ միայն ռազմաճակատում, այլև թիկունքում: Պատերազմի սկզբին ես արդեն փոխադրվել էի երկրորդ դասարան: Ես հիշում եմ, որ մինչև ժամը 12-ը սովորում էինք դպրոցում, իսկ հետո մինչև ուշ երեկո աշխատում կոլտնտեսության դաշտերում: Ամռան ընթացքում մենք աշխատում էինք 16-18 ժամ և ուղղակի գիշերում դաշտում»[6]: Այդ շրջանի մասին հետաքրքիր հուշեր ունի նաև պատմ. գիտ. դոկտոր Հրանտ Աբրահամյանը (Մարտունու շրջանի Քերթ գյուղի դպրոցի նախկին աշակերտ), որը պարգևատրվել է (1947 թ.), «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում աշխատանքային արիության համար» մեդալով[7]:*

*Բերքահավաքին զանգվածաբար մասնակցել են մարզի բոլոր շրջանների դպրոցականներն ու ուսուցիչները, ինչպես նաև Ստեփանակերտի, Շուշիի և շրջկենտրոնների ժողկրթության և տնտեսության տարբեր բնագավառների աշխատողները՝ նպաստելով հացահատիկի բերքահավաքը ժամանակին և անկորուստ կատարելու գործին:*

---

[5] *Российский государственный архив социально-политических исследований (այսուհետև՝ РГАСПИ), ф. 17, оп. 22, д. 44, л. 73.*

[6] **Арутюнян К.** *Участие воинов-армян Нагорного Карабаха и Северного Арцаха в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945), с. 6.*

[7] **Աբրահամյան Հ.**, *Քերթ, Ե., 2010, էջ 59:*

Բերքահավաքն ավարտելուց հետո անհրաժեշտ էր ձեռնամուխ լինել աշնանացանի աշխատանքներին: Այդ նպատակով ԼՂ մարզկոմը որոշում ընդունեց (28.VIII.1941) բոլոր կոլտնտեսություններին ու սովխոզներին ապահովել սերմացուով, ավարտել գյուղտեխնիկայի, ամենից առաջ տրակտորների նորոգման աշխատանքները, ուշադրություն դարձնել լծկան անասունների խնամքին, միաժամանակ, բարձրացնել վարի ու ցանքի որակը և աշխատանքներն ավարտել մինչև հոկտեմբերի 25-ը[8]: Քանի որ տղամարդիկ մեկնել էին ռազմաճակատ, այս դեպքում ևս կանայք փոխարինեցին նրանց՝ հաջողությամբ կատարելով մաճկալի աշխատանքը:

Վար անող կանանց շարժման նախաձեռնողը Ստեփանակերտի շրջանի Բալուջա գյուղի կոլտնտեսուհի Էսթեր Հովակիմյանն էր: Նրա օրինակին հետևեց նույն շրջանի Խանաբադ գյուղի կոլտնտեսուհի Գյուլխաս Մակարյանը: Շուտով դաշտերում հայտնվեցին հարյուրավոր կին մաճկալներ: Վարը կատարվում էր հիմնականում գութանի և արորի միջոցով: Քարշող հիմնական ուժը եզներն էին, ինչպես նաև տրակտորները, որոնց թիվը մարզում շատ քիչ էր, քանի որ ռազմաճակատի կարիքների համար օգտագործելու պատրվակով Ադրբեջանի պետական մարմինները դրանց զգալի մասը ուղարկել էին ադրբեջանական գյուղեր: Չնայած առկա դժվարություններին՝ աշնանացանի աշխատանքներն ավարտվեցին ժամանակին: Այդ ընթացքում ընդարձակվեցին հացահատիկի ցանքին հատկացվող հողատարածքները: Այսպես, օրինակ, 1941 թ. աշնանը մարզում այդ նպատակով պլանից ավելի հերկվեց 8.238 հեկտար[9]: Մարտունու շրջանի Նոգի գյուղի կոլտնտեսուհի Անուշ Հովսեփյանը, երկու որդուն ճանապարհելով ռազմաճակատ, դաշտում միացավ իր ընկերուհիներին և պլանը կատարեց 150 %-ով: «Չնայած այս աշխատանքը տղամարդու գործ է, - հայտարարեց նա, - բայց մեզ դժվարությունները չեն վախեցնում և մենք տիրապետում ենք նաև այդ գործին»[10]:

Ռազմաճակատում տիրող ծանր դրությունը պահանջում էր նորանոր համալրումներ: Մարզի գյուղատնտեսության մեջ աշխատող համարյա բոլոր տղամարդիկ մեկնեցին գործող բանակ: Հարկավոր էր շտապ կադրեր պատրաստել նրանց փոխարինելու համար: Այդ նպատակով բացված կարճատև դասընթացներում մինչև 1941 թ. դեկտեմբերի վերջը պատրաստվեցին

[8] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 53, л. 57-58.
[9] Նույն տեղում, թ. 59-60:
[10] Նույն տեղում, թ. 61:

*կոլտնտեսության 8 նախագահ, ֆերմայի 140 վարիչ, 135 բրիգադավար, 140 օղակավար[11]:*

*Այս ամենից բացի, զգալի գործ կատարվեց նաև անասնապահական աշխատանքները վերակառուցելու ուղղությամբ: Մարզկոմը մշակեց անասնահոտի գլխաքանակն ավելացնելու հատուկ պլան, ըստ որի, հարկավոր էր աշխատանքներն այնպես կազմակերպել, որ մինչև տարեվերջ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը ավելացվեր 9, մանր եղջերավորներինը՝ 19, իսկ թռչուններինը՝ 98%-ով: Անասնապահության զարգացման համար հարկավոր էր ստեղծել կերի կայուն բազա, և ԼՂԻՄ-ի մարզկոմը քննարկեց (14.VI.1941) անասնակերի ավելացման հարցը: Մարզի կոլտնտեսությունների առջև խնդիր դրվեց պատրաստել 865.169 ց կերի կոշտ պաշար, 222.333 ց հյութալի կերի պաշար, 17.000 տ սիլոս: Գյուղի աշխատավորների անձնվեր աշխատանքի շնորհիվ այդ պլանները կատարվեցին ժամանակին և անասունների գլխաքանակն ավելացավ: Օրինակ, 1941 թ. պլանները խոշոր եղջերավոր անասունների գծով կատարվեց 106.3, մանր եղջերավորներինը՝ 120.5, խոզերինը՝ 105.5 %-ով[12]:*

*Պատերազմի առաջին տարվա ընթացքում բերքահավաքից ստացված եկամուտների և պետությանը հանձնված մթերքների մասին Բաքվում այն տարիներին հայերենով հրատարակվող «Կոմունիստ» թերթում Ստեփանակերտի շրջանի Չանախչի գյուղի կոլտնտեսության նախագահ Ալեքսան Արզումանյանը գրում էր. «1941 թ. բերքահավաքը ավարտվել է առանց կորուստների: Հավաքվել և կալսվել է 35.700 ցենտներ հացահատիկ, 20.800 ցենտներ բանջարեղեն, ստացվել է ավելի քան 100 ցենտներ զանազան մրգեղեն և 682 դեկալիտր օղի: Բացի այդ, կոլտնտեսությունը կանխիկ դրամով 267.581 ռուբլու եկամուտ է ստացել: Կատարել ու գերակատարել ենք պետական բոլոր տեսակի պլաններն ու առաջադրանքները... Կարմիր բանակի շարքերը գնացած իրենց որդիներին, ամուսիններին ու եղբայրներին փոխարինելու համար աշխատանքի դուրս եկան հայրերն ու մայրերը, քույրերն ու կանայք: Կոլտնտեսության դաշտերում մեծ նվիրվածությամբ են աշխատում 80 տարեկան Հարություն Առաքելյանը, 78 տարեկան Տիգրան Մնացականյանը, 85 տարեկան Զաքարյանը, որոնք պարտավորվել են աշխատել մինչև իրենց քաջարի որդիների հաղթական վերադարձը»[13]:*

---

[11] *Նույն տեղում:*

[12] *Նույն տեղում, ց. 43, գ. 28, թ. 31.*

[13] *Կոմունիստ, 23.II.1942:*

*Ռազմաճակատի կարիքների համար հացից, կաթից, մսից բացի, խիստ անհրաժեշտություն էր դարձել ծխախոտի մշակությունը, որը մինչ այդ չկար մարզում: Խնդիր դրվեց ծխախոտագործությամբ զբաղվել 1942 թ. սկզբներից: Այդ ուղղությամբ կատարվեց զգալի աշխատանք, որի արդյունքը հստակ երևաց ամռանը: Աշխատավորները աճեցրին բարձրորակ ծխախոտ՝ պետական պլանը կատարելով 150%-ով[14]: Ծխախոտագործությունը զարգացավ հատկապես Մարտակերտի շրջանում: Քանի որ շաքարը ստացվում էր հիմնականում Ուկրաինայի այն շրջաններից, որոնք հայտնվել էին գերմանաֆաշիստական զավթիչների լծի տակ, ուստի դրա բացը լրացնելու նպատակով խնդիր դրվեց ԼՂԻՄ-ում զարգացնել մեղվապահությունը: Եթե նախկինում այդ գործով զբաղվում էին հատ ու կենտ անհատներ, ապա այժմ մարզում ավելացվեց մեղվաընտանիքների քանակը: Ստացված բարձրորակ մեղրը ոչ միայն լրացնելու էր շաքարի պակասը, այլև մեծապես նպաստեց Կարմիր բանակի վիրավոր մարտիկների ապաքինման գործին:*

*Ռազմաճակատի պահանջներին համապատասխան՝ իրենց աշխատանքները վերակառուցեցին նաև մարզի բամբակագործները, որոնք, ավելացնելով բամբակի մշակման տարածքներն ու մթերման պլանները, ստացան ավելի որակյալ հումք: Բամբակագործությունը զարգացավ հատկապես Մարտակերտի շրջանում: Առաջավորների շարքում էր Մարալյան-Սարով գյուղի կոլտնտեսությունը, որը ժամանակին և պատվով կատարեց բամբակի հանձնման պլանը[15]:*

*Մարզում բարձր հիմքերի վրա էր դրված շերամապահությունը, որի համար առկա էին անհրաժեշտ բնական պայմանները: Շերամապահությունը մետաքսի արդյունաբերության հումքի հիմնական բազան էր: Պատերազմի պայմաններում հարկավոր էր գտնել նոր միջոցներ՝ բոժոժի հանձնման պլանը կատարելու համար: Եթե մինչև 1941 թ. տարվա մեջ իրականացվում էր շերամի որդի երկու կերակրում, որի շնորհիվ տարեկան հավաքվում էր կոկոնի երկու բերք, ապա այժմ շերամապահներն անցան շերամորդի 3 կերակրման, որը հնարավորություն տվեց բոժոժի հանձնման պլանը մարզում կատարել 110.5 %ով[16]:*

*Մարզկոմի 11-րդ գումարման 5-րդ պլենումի նիստում (26.XI. 1941) մարզգործկոմի նախագահի տեղակալ Մ. Բալայանը, անդրադառնալով շերամապահության բնագավառում ձեռք բերված նվաճումներին, նշում է. «Մենք*

---

[14] *Սովետական Ղարաբաղ, 1.XI.1942:*

[15] *Նույն տեղում:*

[16] *Նույն տեղում, 1.XII.1941:*

*հնարավորություն ունենք բարձրացնել շերամի բերքը, յուրաքանչյուր տուփից ստանալ 55 կգ բերք: Այսպես, օրինակ, Հադրութի շրջանը այս տարի միջին հաշվով յուրաքանչյուր տուփից ստացել է 56 կգ շերամի բերք: Առանձին կոլտնտեսություններ՝ Մարալյան-Սարովը (նախագահ՝ Այվազյան) ստացել է 81.8 կգ՝ պլանով նախատեսված 49 կգ-ի փոխարեն, Ծամձորի «Հաղթանակ» կոլտնտեսությունը (նախագահ՝ Այվազյան) տվեց 71 կգ՝ պլանը կատարելով 146 տոկոսով»[17]: Դա հնարավորություն տվեց անհրաժեշտ հումքով ապահովել մետաքսի արդյունաբերությունը, որն էլ իր աշխատանքները վերակառուցելով պատերազմի պայմաններին համապատասխան՝ սկսեց արտադրել պարաշյուտի կտոր, վիրահատության մեջ օգտագործվող մետաքսաթել, ավիացիոն արդյունաբերությանն անհրաժեշտ մեկուսիչ ժապավեն, հրետանու համար նախատեսված հատուկ մետաքսի կտոր: Շերամապահությունը զգալի հաջողության հասավ Մարտունու և Հադրութի շրջաններում, որտեղ տարվա վերջին և 1942 թ. սկզբին որոշակի միջոցառումներ ձեռնարկեցին շերամի որդի կերակրման համար կերային լավագույն բազա ստեղծելու համար: Ընդհանուր առմամբ, շերամի որդի երրորդ կերակրումից ստացած բոժոժի հանձնման 1942 թ. պլանը կատարվեց 101.1, իսկ Հադրութի շրջանում՝ 112%-ով»[18]:*

*Ղարաբաղի գինու տրեստի ձեռնարկությունները ևս վերակառուցեցին իրենց աշխատանքները: Արագորեն յուրացնելով բարձրորակ սպիրտի թորման տեխնոլոգիան՝ նրանք ստացան բժշկական սպիրտ, որի կարիքը մեծ էր ռազմաճակատային հոսպիտալներում և երկրի բուժհիմնարկներում: Սպիրտը ստացվում էր հիմնականում խաղողից ու թթից, որոնք աճեցնելու համար Լեռնային Ղարաբաղում կային նպաստավոր պայմաններ: Նշենք, որ թթի և խաղողի մշակմամբ Արցախում զբաղվում էին դեռևս վաղնջական ժամանակներից: Ռազմաճակատի կարիքները բավարարելու նպատակով անհրաժեշտ էր ընդլայնել այդ մրգերի արտադրությունը: Լավագույն այգեգործներ էին համարվում մեծահասակները, որոնք աշխատունակ այգեգործների՝ բանակ մեկնելուց հետո կրկնապատկված եռանդով սկսեցին աշխատել: Պատերազմի տարիներին զգալի չափով ավելացան թթենու և խաղողի այգիների տարածքները, բարելավվեցին մշակման գյուղտեխնիկական միջոցները, ստացվեցին պտղի նոր տեսակներ, որոնք նպաստեցին բերքատվության բարձրացմանը, հնարավորություն ստեղծեցին կատարելու և գերակատարելու պետական պլանները:*

---

[17] *РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 44, л. 73.*

[18] *Կոմունիստ, 5.XII.1942:*

*Այսպիսով, ԼՂԻՄ-ի կուսակցական և պետական մարմինների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հնարավոր եղավ կարճ ժամանակամիջոցում մարզի գյուղատնտեսության աշխատանքները վերակառուցել պատերազմի պահանջներին համապատասխան՝ թողարկելով ռազմաճակատի կարիքների համար անհրաժեշտ գյուղատնտեսական մթերքներ:*

## ПЕРЕСТРОЙКА СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА В НКАО В ГОДЫ ВОЙНЫ (1941-1945 ГГ.)

**АРУТЮНЯН К. А.**

Резюме

С первого дня Великой Отечественной войны, наряду с военно-мобилизационными мероприятиями, значительная работа проводилась по перестройке сельского хозяйства НКАО на военные нужды. Благодаря предпринятым партийными и государственными органами НКАО необходимым мерам стало возможным в кратчайшие сроки перестроить работы в области сельского хозяйства в соответствии с требованиями военного времени, что дало возможность собрать необходимые для фронта сельскохозяйственные продукты. И это было достигнуто благодаря каждодневному героическому труду женщин, стариков, инвалидов и подростков, заменивших ушедших на фронт мужей, отцов, братьев и сыновей.

## RESTRUCTURING OF AGRICULTURE IN NKAO DURING THE WAR (1941-1945)

**K. HARUTYUNYAN**

Abstract

From the outset of Great Patriotic War, alongside with military and mobilizations acts, significant work on restructuring NKAO agriculture to military needs was carried out. Due to the necessary measures taken by parties and government institutions, agriculture was restructured in accordance with the requirements of the time thus making it possible to get the products needed at

the front. It became possible thanks to the hard daily work of women, the old, disabled and teenagers who replaced their fighting husbands, fathers, brothers and sons.